**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

**YEREVAN STATE UNIVERSITY**
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 172 «___27___»___04______2018 թ.

# Արձանագրություն N 172

## ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ-ի ապրիլի 27-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 24-ը:

### Օրակարգ

1. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:

Արտահայտվեցին ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Սիմոնյանը, քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ Ա. Ենգոյանը, քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ Գ. Քեռյանը, պրոֆեսոր Վ. Բայբուրդյանը, պրոֆեսոր Ա. Մելքոնյանը, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ Ա. Սաֆարյանը, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ Դ. Սարկիսյանը: Ելույթ ունեցողները պաշտպանեցին ֆակուլտետի հինգ ամբիոնների կողմից առաջադրված պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Հարությունի Պետրոսյանի թեկնածությունը: Նշվեց նախորդ հինգ տարիների պաշտոնավարման ընթացքում ֆակուլտետում կատարված ուսումնական և գիտամեթոդական աշխատանքների հսկայական ծավալը և դասավանդման գործընթացի բարելավման հաջողությունները:

### Խորհուրդը որոշեց.

Ընտրել՝ ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ԵՊՀ միջազային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի թեկնածու Գեղամ Պետրոսյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են 24-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

**Գեղամ Պետրոսյան-23 կողմ, դեմ 1, անվավեր քվեաթերթիկ չկա:**

*Խորհրդի նախագահ, պրոֆեսոր* *Գ. Պետրոսյան*

*Խորհրդի քարտուղար, դոցենտ* *Ա. Խսրայելյան*

*Իսկականի հետ ճիշտ է՝*